

**ԵՐԵՎԱՆՑԻ ԽՈՋԱ ԳՐԻԳՈՐ ՄՈԾԱԿԵՆՑԸ ԵՎ ՄԵՍՐՈՊ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ N 6231
ՀԱՅՍՄԱՎՈՒՐՔԸ**

Խաչիկ Հարությունյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
ՀՀ, Երևան, Մաշտոցի պողոտա 53
Էլ. հասցե՝ khachik.har@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 01.02.2021, գրախոսվել է 07.02.2021,
ընդունվել է տպագրության 28.06.2021
DOI: 10.53548/03208117-2021.2-67

Ներածություն

Երևանի և երևանամերձ գրչօջախներում ստեղծված ձեռագիր մատյանների ցուցակագրումը, նյութի մշակումն ու քննությունը¹ ցույց են տալիս, որ, թեև այստեղից մեզ ձեռագրեր են հասել դեռևս XIII դարից², այնուամենայնիվ, ձեռագրակերտումն այս օջախներում նոր թափ է առել հատկապես XVII դ. երկրորդ տասնամյակից սկսած: Իբրև գրչության վայր՝ ձեռագիր ընդօրինակողները հիշատակել են Երևանի և նրա մերձակայքի եկեղեցիները (Երևանում՝ Սուրբ Անանիա առաքյալի անապատը, Կաթողիկե Ս. Աստվածածինը, Ս. Պողոս-Պետրոսը կամ Երկուերեսնին, Ձորագյուղի անապատի Ս. Սարգիսը, Ս. Հակոբը, Նորքում՝ Ս. Սիմեոն Ծերունի և Ս. Աստվածածին եկեղեցիները, Քանաքեռում՝ Ս. Աստվածածինը, Ս. Հա-

¹ Հետազոտությունն իրականացվում է «Երևանի գրչության կենտրոնները և ձեռագրական ժառանգությունը» թեմայի շրջանակում՝ ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած դրամաշնորհով (ծածկագիր՝ 19YR-6A035):

² Երևանում կամ նրա մերձակայքում ընդօրինակված մեզ հայտնի թվակիր հնագույն ձեռագիրը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) N 522 Տոնապատճառն է՝ գրչագրված 1297 թ. Նորքում՝ «ձեռամբ Սարգիս կոչեցեալ անարժան քահանայի»: XIII դարավերջով է թվագրվում նաև նույն գրչի մեկ այլ ձեռագիր (մանրամասն տե՛ս Մաթևոսյան 1972, 113-118): Մեր պրպտումների շնորհիվ վերջերս ի հայտ եկավ հիշյալ Սարգիս գրչի մեկ այլ ձեռագիր՝ նախորդի պես անթվական և առանց գրչավայրի նշման. հիշատակարանի որոշ առանձնահատկություններ մեզ թույլ են տալիս ենթադրել, որ մատյանը կրկին Նորքում է գրչագրվել XIII դ. վերջին: Հմմտ. Ճեմճեմեան 1996, 707-712:

կորը, Նորագավթում՝ Ս. Գևորգը, Առինջում՝ Ս. Աստվածածինը և այլն)³, որոնց հովանու ներքո իրենք գրչությամբ են զբաղվել:

Անտարակույս, XVII դարասկզբի ձեռագրաստեղծման այդ վերելքին մեծապես նպաստել է Սյունյաց Մեծ անապատից Երևանի Ս. Անանիա առաքյալի մենաստան տեղափոխված և տեղում լուսավորչական բեղուն գործունեություն ծավալած Մովսես Տաթևացին (կամ Խոտանանցին, ապագա կաթողիկոս Մովսես Գ. Տաթևացին 1629-1633 թթ.), որը ժամանակի գրավոր հուշարձաններում, այդ թվում՝ ձեռագիր հիշատակարաններում, նշվում է իբրև իմաստուն և քաջ լաբունապետ, «որ իբրեւ զԱրուսեակ փայլեաց ի մէջ հայկազեան սեոիս»⁴: Բավական է նկատել, որ միայն 1620-1660 թթ. ընթացքում Անանիա առաքյալի ուխտում ամբողջությամբ կամ մասնակի ընդօրինակված 8 ձեռագիր է մեզ հայտնի, որոնք գրչագրել են Մովսես Տաթևացու աշակերտները (Զաքարիա արեւղա (ապա՝ վարդապետ, եպիսկոպոս) Էջմիածնեցի, տեր Պողոս Տիվրիկեցի, տեր Մինաս և ուրիշներ)⁵: Նրանցից ոմանք ձեռագրեր են ընդօրինակել նաև այլ սրբավայրերի հովանու ներքո: Նույն դարի երկրորդ կեսին տեղի գրչօջախների շարքում աչքի են ընկնում նաև Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածինն ու Նորքի Ս. Սիմեոն Ծերունի և Ս. Աստվածածին եկեղեցիները, որոնք, իբրև գրչավայր, քանիցս արձանագրված են ժամանակի ձեռագիր հիշատակարաններում:

Երևանի և նրա մերձակայքի այս գրչօջախներում XVII դարում ձեռագրեր են ընդօրինակել տասնյակ գրիչներ, սակայն ձեռագրաստեղծ բեղուն գործունեութեամբ աչքի են ընկել հատկապես Գրիգոր Երևանցին⁶ և Ավետիս Երեց Երևանցին⁷, որոնց ընդօրինակած մի քանի տասնյակ մատյանները հարստացնում են վերոհիշյալ գրչօջախների ձեռագրական ժառանգությունը, իսկ նրանց թողած հիշատակարանները արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ժամանակի քաղաքային անցուղարձերի վերաբերյալ՝ լրացնելով մեր գիտելիքը նշյալ շրջանի դեպքերի ու դեմքերի մասին:

³ Հմմտ. Հարությունյան Ա. 2020ա, 455-479:

⁴ Հակոբյան, Հովհաննիսյան 1978, 97, Հարությունյան Ա. 2020բ, 39-47:

⁵ Հարությունյան Ա. 2020բ, 84:

⁶ Հմմտ. Հարությունյան Խ. 2020ա, 57-80:

⁷ Հարությունյան Ա. 2019, 321-342:

Ձեռագրաստեղծման ավանդույթների վերազարթոնքը, սակայն, պայմանավորված չէր միայն գրիչների գործունեությամբ. այդ հարցում կարևոր ներդրում են ունեցել նաև ընդօրինակումները հովանավորած պատվիրատուները կամ ստացողները, որոնց գրիչները հիշատակում են ջերմ ու բարի խոսքերով, որոշակի տեղեկություններ հաղորդում վերջիններիս մասին՝ շատ հաճախ օգտակար տվյալներ նշելով նաև նրանց գործունեության վերաբերյալ: Այս ամենը հնարավորություն է տալիս ոչ միայն անվանապես, այլև գործով ու կենցաղով ճանաչելու գրչությունը հովանավորած անձանց: Առանձին դեպքերում հիշատակագիրները մանրամասն շարադրել են նաև պատվիրատու-ստացողների ընտանիքի անդամների անունները՝ ընդգծելով նրանց ազգակցական հարաբերություններն արտահայտող բառերով (հորեղբայր, հորեղբոր որդի, աղջիկ, մորեղբայր, մորեղբոր որդի և այլն)⁸:

Ներկա հոդվածը գրելու շարժառիթը, մի կողմից, ժամանակին երևանամերձ Նորք գյուղաքաղաքում (այժմ՝ Երևանի վարչական շրջան) գրչաված ՄՄ N 6231 Հայսմավուրքի պատմության, մյուս կողմից, նրա պատվիրատուի՝ Մոծակենց տոհմից երևանցի մեծահարուստ վաճառական խոջա Գրիգորի ու նրա ընտանիքի մասին տեղեկությունների վերհանումն է: Մեր փնտրտուքը ցույց տվեց, որ Երևանի պատմությամբ զբաղված տարբեր հետազոտողներ ևս նկատել և անդրադարձել են Գրիգոր խոջային, արել արժեքավոր դիտարկումներ՝ երբեմն, սակայն, շփոթելով նրա անվանն ու գործին առնչվող որոշ տվյալներ: Որոշումների շնորհիվ պարզվեց նաև, որ մեր գրավոր աղբյուրներում հիշատակվում են Մոծակենց տոհմի այլ ներկայացուցիչներ ևս, ուստի՝ հարկ համարեցինք մեկտեղել և ամբողջացնել առկա նյութը՝ անդրադառնալով ինչպես խոջա Գրիգորին, այնպես էլ նրա պատվիրած Հայսմավուրքին:

Գրիգոր խոջան, նրա ընտանիքը և որոշ վկայություններ Մոծակենց տոհմի մասին

Երևանյան գրչօջախներում ընդօրինակված և պահված մատյանների հիշատակարանների քննության ընթացքում տասնյակ պատվիրատու-ստացողների մեջ մեր ուշադրությունը գրավեց խոջա Գրիգոր անունով XVII դ. երկրորդ կեսի երևանցի մի մեծահարուստ վաճառական՝ Մոծա-

⁸ Հմմտ. Հարությունյան Խ. 2019, 141-158, Հարությունյան Խ. 2020թ, 382-385:

կենց տոհմանունով, որի ընտանիքի և գործունեության մասին իրենց հիշատակարաններում որոշ տեղեկություններ են հաղորդել 1652 թ. ընդօրինակված ՄՄ N 6231 Հայսմավորքի գրիչներ Ստեփանոսն ու Կարապետ Մոկացին: Մասնավորապես, առանձին հետաքրքրություն է ներկայացնում ձեռագրի երկրորդ և, ըստ էության, հիմնական մասի գրիչ Կարապետ Մոկացու թողած գլխավոր հիշատակարանը, որն էլ, իր հերթին, պատվիրատուի, նրա ընտանիքի և գործունեության մասին տեղեկությունների ստացման հիմնական աղբյուրն է:

Ըստ Մոկացու հիշատակարանի՝ ծնունդով Երևանցի Գրիգոր խոջան վաճառականությամբ զբաղվելու նպատակով 16 տարեկանում մեկնել էր Լեհաց երկիր, որտեղ 20 տարի ծավալել է առևտրական արդյունաշահ գործունեություն (այստեղից էլ նրա *խոջա* պատվանունը), շրջել ծովով և ցամաքով, ապա վերադարձել է ծննդավայր Երևան: Հիշատակարանից քաղվածաբար վկայակոչենք մեզ հետաքրքրող հատվածը.

«Յիշեցէ՛ք ի Քրիստոս զխօջայ Գրիգորն՝ զստացող Յայսմաւորիս, զի էր սա ի յԱյրարատեան՝ ի գեղաքաղաքէն Երեւանոյ, որդի Արզումբէկի՝ որդոյ Սիմէոնի, որ մականուն Մոծակ կոչի: Եւ յաւուր միում մտաւ ածեալ զգործ վաճառականութեան՝ յուսացեալ յԱստուած եւ յաջողութիւն նորա, եւ գնաց: Եւ ի գնալն նորին էր հասակն իւր ամաց վեշտասանից... գնաց ի յերկիրն Իւլիսաց, որ է Լէհ, զոր բազում նեղութիւն եւ անձկութիւն կրեաց ընդ ծով եւ ընդ ցամաք շրջագայութեամբն իւրով ամս Ի (20), եւ յետոյ միտ էած զաւանդութիւն նախնեացն եւ զգանազանութիւն տիրախնամ աստուածաշէն երկրին իւրոյ Այրարատեան եւ զիջումն Միածնին ի նմին եւ զայլ բազմութիւն սրբոցն...: Զայս ամենայն ի միտ բերեալ աստուածասէր այրս այս՝ խօջայ Գրիգորն եւ մեծաւ փափագմամբ յուղի անկեալ եկն Եհաս ի բնիկ յերկիրն իւր՝ յԱյրարատ»⁹:


Ըստ հիշատակարանի՝ խոջայի վերադարձն ուրախացրել է քաղաքի բնակիչներին («բնակիչք քաղաքին յոյժ ուրախ եղեն ի գալ նորա»), քանի որ նրանց հայտնի էին Գրիգորի աստվածասիրությունն ու բարեգործությունները, որոնք հաստատվում են նաև խոջայի մասին ներքոնշյալ տեղեկություններով: Սակայն հիշատակարանից պարզ չէ, թե երբ է խոջան Երևան վերադարձել: Գրիգոր խոջայի անցած ուղու մասին այս մանրամասները հայտնելուց հետո Կարապետ գրիչն անվանապես թվարկում է

⁹ Հակոբյան 1984, 500-501:

նաև խոջայի մերձավոր ազգականների, հոգևոր զավակների անունները: Ուշագրավ է, որ գրիչը նշում է նաև տան մեկ սպասավորի անունը, ապա ընդհանուր կերպով խնդրում է հիշել նաև տան մյուս աշխատողներին: Այս փոքրիկ, բայց կարևոր հատվածն ինքնին խոսում է և փաստում է, որ խոջայի տանը միաժամանակ սպասավորել են մեկից ավելի անձինք: Որոշ կրճատումներով ներկայացնենք այդ արժեքավոր վկայությունը՝

«Դարձեալ յերեսս անկեալ աղաչեմ զձեզ, ո՛վ մանկունք սուրբ եկեղեցոյ, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զպարոն խօջայ Գրիգորն եւ զկողակիցն՝ զՀունսիխանն եւ զհոգեւոր որդիքն՝ զՄկրտիչն եւ զՅակոբջանն, եւ զճնօղքն իւր՝ զԱրզումբէկն եւ զԵղիսաբեթն, եւ զեղբայրն իւր՝ զխօջայ Աւետիսն, եւ զԱւետիսի որդիքն՝ զԱրզումբէկն, զՍիմէոնն եւ զՄարգարէն, յիշեցէ՛ք եւ «Աստուած ողորմի» ասացէք նոցա...: Դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս՝ զխօջայ Գրիգորն եւ զպապն իւր՝ զՍիմէոն եւ զհայրն՝ զԱրզումբէկն եւ զմայրն՝ զԵղիսաբեթն, եւ զմօրէ պապն՝ զՍամուէնց Ստեփանն եւ զաներքն իւր՝ զԱղաբէկն եւ զորդի նորա՝ զպարոն Էալբէկն, յիշեցէ՛ք եւ «Աստուած ողորմի» ասացէք. ամէն: Այլեւ յիշեսցի՛ք ի Տէր զԳրիգորն եւ զկողակիցն՝ Հունսիխանն եւ զգոքանչըն իւր՝ զՄահիճանն եւ զհոգոյ որդին իւր՝ զԻգնատիոս, եւ զաղախինն իւր՝ զԹիթորիխանն եւ զայլ ամենայն աշխատողս, որ ի տան սորա իցեն»¹⁰:

Փաստորեն, հիշատակարանը տեղեկություններ է պարունակում նաև խոջայի ընտանիքի կազմի և որոշ ազգականների մասին: Այդ վկայությունը գծագրով արտահայտելու պարագայում կունենա հետևյալ տեսքը (բուն Մոճակենք ընդգծված են թավով).



¹⁰ Հակոբյան 1984, 501-502:

Ինչպես երևում է, ձեռագրի գրչության ժամանակ Գրիգոր Խոջան զավակներ չի ունեցել, ուստի հիշատակվում են միայն նրա հոգևոր զավակներ Մկրտիչն ու Հակոբջանը: Մատյանի 161ա երեսի հիշատակարանում Գրիգոր Խոջան հիշատակվում է նաև որպես երիցփոխան (իմա՝ հոգաբարձու), ենթադրաբար՝ Երևանի Կաթողիկե եկեղեցու, իսկ ավելի ուշ Առաքել Դավրիժեցին նրան հիշատակում է նաև «մահտեսի» ձևով (տե՛ս ստորև բերվող քաղվածքում): Այստեղից հետևում է, որ ձեռագրի գրչությունից հետո Խոջան, իբրև ուխտավոր, այցելել է նաև Սուրբ երկրի սրբավայրեր:

Գրիգոր Խոջայի եղբայր Ավետիսը, որը, հավանաբար նույնպես առևտրով է զբաղվել և դարձյալ «խօջայ» կոչվել, ըստ նույն հիշատակարանի՝ ունեցել է երեք զավակ, որոնցից թերևս ավագը կրել է պապի (Արզումբեկ) անունը, իսկ միջնեկը՝ պապի հոր (Սիմոն): Կրտսեր որդին հիշված է Մարգար անվամբ: Ձեռագրի հիշատակարանում Ավետիս Խոջան բնութագրվում է «աղքատասեր», «լիասիրտ», «առատածեռն» մակդիրներով: Այսինքն՝ վերջինս ևս հայտնի է եղել իր բարեգործություններով: Ավետիսի, նրա որդիների մասին տեղեկություններ գտնելու մեր փնտրտուքը արդյունք չտվեց՝ բացառությամբ մի հետաքրքիր դրվագի, որ հիշատակում է Զաքարիա Ագուլեցին իր «Օրագրության» մեջ: Ուղեգիրը նշում է, որ 1661 թ. դեկտեմբերի 16-ին իր եղբայր Սիմոնը կնության է առել Մոծակենց Արզնբեկի կնոջը. «Սիմոնն ինձ գիր ուղարկեց, թե դեքտեմբերի ԺԶ.ումն Մոծակենց Արզնբեկի կինն առի»¹¹: «Օրագրության» երրորդ՝ «Ընտանեկան ժամանակագրութիւն» գլխում Ագուլեցին մանրամասնում է այս տեղեկությունը. «Այս Սիմոնս առաւ Երևանցի խօջայ Ավետիսի որդոյ Արզնբեկի կինն, անուն էր Գուլում, որ է Մաթոսի դուստր»¹²: Փաստորեն, երկու այս գրություններից հետևում է, որ Մոծակենց Ավետիս Խոջայի որդի Արզումբեկը ամուսնացած է եղել ոմն Մաթոսի դստեր՝ Գուլումի հետ (տե՛ս նաև գծագիրը): Մեզ անհայտ պատճառով 1661 թ. Գուլումը դարձյալ ամուսնացել է, բայց այս անգամ Զաքարիա Ագուլեցու եղբոր՝ Սիմոնի հետ: Յավոք, Ագուլեցին չի նշում, թե որն է եղել Գուլումի այս նոր ամուսնության պատճառը, սակայն առավել քան հավանական է, որ Արզումբեկը վախճանվել է մինչև 1661 թ., իսկ Գուլումը այրիացել է: Առանձնանշելի է,

¹¹ Հմմտ. Ագուլեցի 1938, 58:

¹² Ագուլեցի 1938, 166:

որ Զաքարիա Ագուլեցու եղբայր Սիմոնը ևս 1660 թ. կորցրել է իր առաջին կնոջը՝ Գուլադին, որի հետ ապրել էին շուրջ 20 տարի, ունեցել մեկ աղջիկ և չորս տղա: Կնոջ մահից հետո 1661 թ. Սիմոնն ամուսնանում է Գուլումի հետ, ունենում մեկ աղջիկ և երկու տղա¹³: Սիմոնն ու Գուլումը միասին հիշատակված են նաև Խոր Վիրապ վանական համալիրի Ս. Վիրապի բեմի աջակողմյան որմին ագուցված խաչքարի 1669 թ. վիմագրում¹⁴:

Քննվող Հայսմափութի ընդօրինակման ժամանակ Գրիգոր և Ավետիս խոջաների ծնողներ Արզումբեկն ու Եղիսաբեթը արդեն հանգուցյալ էին: Այդ մասին նշվում է ձեռագրի տասնյակ մանր հիշատակագրություններից միայն այս մեկում. «Արա՛ արժանի քում տեսլեանդ... Եւ զհանգուցեալ ծնողքն՝ զպարոն Արզումբեկն ընդ Եղիսաբեթեան» (ընդգծումը մերն է - Խ.Հ.)¹⁵:

Կարապետ գրչի վկայության համաձայն՝ Գրիգորի պապ Սիմեոնը կրել է Մոծակ մականունը, որը, ինչպես երևում է նաև Զաքարիա Ագուլեցու վերոնշյալ հիշատակումից, ծագայել է որպես տոհմանուն: Հենց այդ տոհմանունով է Գրիգոր խոջային հիշատակել նաև XVII դ. նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցին՝ Քասախ գետի վրա խոջայի կառուցած կամրջի առիթով, որի մասին ստորև առանձին կխոսվի: Մեջբերենք այդ հատվածից մի քաղվածք. «Վասն որոյ բարեպաշտ եւ քրիստոսասէր այրն՝ մահտեսի խօջայ Գրիգորն, զոր մականուամբ Մոծակենց Գրիգոր ասէին, որ է բուն տեղացի յերեան քաղաքէն» (ընդգծումը մերն է - Խ.Հ.)¹⁶:

Մեր պրպտումները երևան հանեցին նաև այլ անձանց, որոնք հիշատակվում են *Մոծակ* կամ *Մոծակենց* ձևով: Ուստի ավելորդ չենք համարում այստեղ վկայակոչել մեզ հայտնի այդ մի քանի հիշատակությունները, որոնք վկայում են առնվազն XVII-XVIII դդ. նշյալ տոհմի ներկայացուցիչների ազդեցիկ դերի մասին: Այսպես. խոսելով Քանաքեռ գյուղի գոռոզ տանուտեր Ամիրճանի և նրա նոտար Մկրտչի մասին՝ XVII դ. պատմագիր Զաքարիա Սարկավազը, իբրև դեպքերի ականատես, գրում է, որ Մկրտիչն իր և տանուտիրոջ միջև ծագած վեճի ընթացքում օգ-

¹³ Ագուլեցի 1938, 166-167:

¹⁴ Հարությունյան Ա. 2017, 102:

¹⁵ ՄՄ, N 6231, 220բ: Ձեռագրի տարբեր էջերին կան մանր հիշատակագրություններ, որոնք հիշատակարանների ժողովածուում տեղ չեն գտել: Ուստի որոշ էջեր հղում ենք բուն ձեռագրից:

¹⁶ Դավրիժեցի 1990, 285:

նույնպես ակնկալիքով դիմել է իրեն համախոհ գյուղի երեք ավագներին, որոնց մեջ հիշատակում է նաև Սարգիս Մոծակին. «անուն միոյն Բարսեղ, որ ասէին Բիսցնօղ (իմաստը՝ անստույգ - Խ.Հ.), երկրորդն Սարգիս, որ ասէին Մոծակ, երրորդն Ղազար, որ ասէին Փալանտուզ (իմա՝ փալան պատրաստող, փալանչի - Խ.Հ.)»¹⁷:

Պատմագիրն ուշագրավ տեղեկություն է հայտնում Մոծակենց տոհմի մասին ևս. ըստ նրա՝ այս տոհմի նահապետը ազգությամբ վրացի ազնվական է եղել, որը վրաց ազատների ընտանիքներից պատանդառված այլ պատանիների հետ ուղարկվել է Հովհաննավանք՝ որպես գրավ Սուրբ Գևորգի մասունքները ստանալու դիմաց: Հետագայում այդ մանուկներից ոմանք ցանկացել են մնալ Հայոց աշխարհում և ցրվել են երկրի տարբեր կողմերում, նրանց թվում է եղել նաև Մուցա անունով մեկը, որից էլ, ըստ Զաքարիա պատմագրի, սերել են Մոծակենք. «Եւ այսպէս ցրուեցան ամենեքեան... ոմն գնաց ի Քանաքեռ՝ Մուցայ անուն, եւ ահա կոչին Մոծակենք»¹⁸: Թե որքանով է այս տեղեկությունը հավաստի, դժվարանում ենք նշել. պատմագիրն այս միտքը հիշելով մեջ է բերում մի գրքից, որն ինքը կարդացել էր ժամանակին և որը «ահագին շարժի» (իմա՝ 1679 թ. մեծ երկրաշարժը) ժամանակ անհետացել էր¹⁹: Մոծակենց տոհմի մասին պատմագրի այս տեղեկությունը խիստ գայթակղիչ է թվում, սակայն ձեռքի տակ չունենալով լրացուցիչ այլ փաստեր, ինչպես նաև նկատի ունենալով ժամանակային բավական մեծ խզումը՝ զերծ ենք մնում XVII դարից մեզ հայտնի Մոծակենց տոհմի և վերը հիշված Մուցայի կապի մասին եզրակացություններ անելուց:

Այս համատեքստում պետք է հիշատակենք XIII դարասկզբով թվագրվող նվիրատվական մի հետաքրքիր արձանագրություն, որ փորագրված է Հայրավանքի հարավային և արևմտյան պատերի անկյուններում: Արձանագրության մեջ հիշատակված է ոմն Մուծկանց Գրիգոր, որը, Զահաբի, Աբելի և Առաքելի հետ միաբանելով, Երևանում գտնվող «Սապոնոնց» այգին նվիրել է նշյալ եկեղեցուն՝ դրա դիմաց ստանալով 4

¹⁷ Քանաքեռցի 2015, 92:

¹⁸ Քանաքեռցի 2015, 202:

¹⁹ Քանաքեռցի 2015, 201:

պատարագ²⁰: Եթե «Մուծկանց» տոհմանունով հիշված այս Գրիգորն առնչություն ունի XVII դ. նշանավոր Մոծակենց տոհմի հետ, ապա Հայրավանքի այս վիմագիրը վերածվում է այդ տոհմի հնության մասին վկայող ամենից արժանահավատ վավերագրի: Ի դեպ, վիմագիրն առանձնանում է նաև Երևան տեղանվան միջնադարյան մի նոր հիշատակմամբ²¹:

Մոծակենց տոհմանունը հիշատակում է նաև XVIII դ. մատենագիր Աբրահամ Երևանցին: Խոսելով թուրքական ուժերի կողմից 1724 թ. Երևան քաղաքի և բերդի պաշարման, դրան նախորդած և հաջորդած դեպքերի մասին՝ Աբրահամ Երևանցին թվարկում է Երևանի Միհրալի խանի հրամանով քաղաքի միջնաբերդում իրենց ընտանիքին երով հավաքված 12 մեծատուններին. «Իշխանն Երեվանայ առեալ էր ի ներքս յամրոցն Երեվանայ ի մեծամեծացն հայոց զերկոտասան անձինս ամենայն տամբ նոցա, որոց գլխաւորքն էին... Բաբաջան Մոծակեան եւ այլք ընդ նոսա»²²: Մոծակենց Բաբաջանի մասին այլ տեղեկություններ գտնել հնարավոր չէղավ, սակայն միայն այն փաստը, որ նա հիշատակվում է XVIII դ. առաջին կեսի Երևանի ազդեցիկ ընտանիքների շարքում, արդեն իսկ վկայում է, որ Մոծակենց տոհմը շարունակում էր պահպանել իր հեղինակությունն ու դիրքը:

Մեր ձեռքի տակ եղած նյութերում Մոծակենց տոհմանունը վերջին անգամ հիշատակվում է 1758 թ.: Այս անգամ այն հանդիպում է Կոտայքի մարզի Առինջ գյուղի նշանավոր Ձագավանքի կամ Գետարգել Սուրբ Նշան եկեղեցու հյուսիսային պատի արձանագրության մեջ, որի համաձայն՝ Մոծակենց Մկրտիչը գնել և տնօրինելու իրավունքով եկեղեցուն է տվել Ձագավանքի հանդամասը: Ահա արձանագրությունը. «Կաման Աստուծոյ ես՝ Մոծակենց Մկրտիչս, Ձագավանոց հանդն գնեցի եւ տուվի վախմ (իմա՝ նվեր, ընծա - Խ.Հ.) Գետարգել Սուրբ Նշանիս. ով ոք ետ առնէ, ԳՃԺԸ հայրապետաց նզոված լինի. թվին ՌՄԷ (1758)»²³:

Կարելի է ասել, որ հանձին Մոծակենց տոհմի՝ գործ ունենք դեռևս միջնադարից եկող երևանյան հայ ազնվական մի գերդաստանի հետ, որի

²⁰ Դիվան հայ վիմագրության 1973, 70, արձ. 264: Շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետ, պ.գ.թ. Արսեն Հարությունյանին՝ արձանագրության մասին մեզ տեղեկացնելու համար:

²¹ Հմմտ. Հարությունյան Ա. 2020գ, 246-248:

²² Երևանցի 1977, 103:

²³ Գասպարյան 2007, 213:

տարբեր սերունդներ աչքի են ընկել իրենց կատարած բարի և հիշատակման արժանի գործերով: Գրեթե վստահ ենք, որ Մոծակենց թիվն ու գործն ավելին են, քան հնարավոր եղավ այս համառոտ շարադրանքով ներկայացնել, ուստի՝ հուսով ենք, որ առաջիկայում ի հայտ կգան այս տոհմին առնչվող այլ տեղեկություններ ևս:

Գրիգոր խոջայի գործունեությունը

Խոջա Գրիգորի գործունեության մասին մանրամասն շարադրել է քննվող Հայսմավուրքի գրիչներից Կարապետ Մոկացին. «Եւ յԵրեւանու քաղաքիս մուքն ազատեալ վախմ արար յիշատակ իւրն եւ ծնողացն իւրոց: Եւ շինեաց զԿաթողիկէի եկեղեցոյ ժամատուն ի հմանց բազում ծախիւք եւ ետ ընծայս եկեղեցոյ՝ մէկ Յայսմաւուր, Ա. (1) Ճաշոց, Ա. (1) ոսկէտուփ մագաղաթ Աւետարան, Ա. (1) Ատենի Սաղմոսարան, Ա. (1) զարբափ շուրջառ իւր զգեստովն, Ա. (1) արծաթէ բուրվառ, Ա. (1) ջահ, Դ. (4) թուջի կանթեղ, Ա. (1) թիքմայ վակաս մարգարտաշար, Գ. (3) պատկեր քաթանի վերայ շինած, Ա. (1) թիքմայ սաղաւարտ մարգարտաշար, Բ. (2) պասմայ ծածկոց, Ա. (1) թուջի բուրվառ, Գ. (3) շապիք, Ա. (1) ջուխտ ցնծղայ, Բ. (2) զանկակ, Ա. (1) ջուխտ արծաթէ քշոց, Ա. (1) արծաթէ քշոց, Ա. (1) խաչվառի խաչ, Ճ. (100) մարջլի²⁴ իւր խաչվառովն, Ա. (1) վարագուր նորոգեաց իւր խարճովն, Ա. (1) կամուրճ շինեաց Փարաքարայ ջրին վերայ, Ա. (1) քահրէզով աղբիւր ջուր եբեր ի Ղրբուլախի ջրէն, Կաթողիկէի շրջապատի միջովն հասոյց ի մէջ քաղաքին կամարածեւ կերպիւ, որ եւ Աստուած վարձահատոյց լիցի ի յաւուրն դատաստանին. ամէն»²⁵:

Հիշատակարանն իր այս արժեքավոր տեղեկություններով չի վրիպել ուսումնասիրողների ուշադրությունից: Առաջին անգամ այն հրատարակել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցու ավագ քահանա տեր Գրիգոր Սուքիասյանցը «Эриванские объявления» թերթի 1909 թ. երկու համարներում՝ «Մի հետաքրքիր դոկումենտ» խորագրով²⁶: Ավագ քահանան հատուկ ուշադրություն է հրավիրել Երևանի Կաթողիկէ Ս. Աստվածածին եկեղեցու ժամատան կառուցման, ինչպես նաև եկեղեցու շրջակայքով քաղաքամեջ խմելու ջուր հասցնելու փաստերի վրա: Հոդվածի վերջում նա ուշագրավ համեմատություն է անում Գրիգոր խոջայի կատարած աշխա-

²⁴ Հմմտ. Ղազարյան, Ավետիսյան 2009, 495:

²⁵ Հակոբյան 1984, 501:

²⁶ Հմմտ. Սուքիասեանց 1909:

տանքի և իր ժամանակի քաղաքային կառավարչական մարմինների միջև՝ գրելով. «Այժմ, այս լուսաւորեալ, կուլտուրական դարում քաղաքումս խմելու ջուր չկայ եւ այդ ամենակարեւոր կենսական պահանջը մի ամբողջ Դումա, Ուպրավա ու քաղաքագլուխ, արդէն 25 տարի է, չեն կարողանում համաձայնութեան գալ, որ քաղաքացիներին խմելու մաքուր, առողջարար ջուր մատակարարի, իսկ սրանից 257 տարի առաջ մի մարդ միայն, - մի Մոծակենց խօջայ Գրիգոր,... Դրբուլաղ ջրից քահրէզներով եւ փողոակներով (իմա՝ քունգերով - Խ.Հ.) ջուր է բերել տուել քաղաքացիների համար»:

«Դրբուլախից քահրէզով» եւ «կամարածեւ կերպի», այսինքն՝ կամարածն ջրուղով ջուր բերելուն անդրադարձել է նաև Երևանի պատմության քաջագիտակ Երվանդ Շահագիզը: Կոնդի Ս. Հովհաննէս եկեղեցու համար ջուր բերելու առիթով Շահագիզն առավել հավանական է համարել, որ այս պարագայում նշյալ Դրբուլախը Երևանով հոսող Գետառ գետն է, որի մի բարձրադիր հատվածից հնարավոր է եղել կազմակերպել «ինքնահոս» ոռոգումը²⁷: Երևանի պատմության մեկ այլ գիտակ՝ Թադևոս Հակոբյանը վերահաստատել է Շահագիզի այս կարծիքը՝ կրկին ընդգծելով Գրիգոր խոջայի ունեցած ավանդը քաղաքի որոշ հատվածի ջրամատակարարման գործում²⁸:

Ուշագրավ են հիշատակագրի հայտնած մյուս տեղեկությունները ևս. ինչպես երևում է, խոջան, մինչ ջրուղու կառուցումը, նախ գնել է քաղաքի կալվածքները կամ դրանցից օգտվելու իրավունքը և «վախմ» է տվել՝ որպես հիշատակ իր ծնողների, որոնք արդեն հանգուցյալ էին, ինչպես վերը տեսանք. «Եւ յԵրեւանու քաղաքիս մուլքն ազատեալ վախմ արար՝ յիշատակ իւրն եւ ծնողացն իւրոց»: Ե. Շահագիզի կարծիքով՝ այդ իրավունքը խոջան տվել է քաղաքի բնակիչներին²⁹: Մինչդեռ վերոբերյալ հատվածում հիշատակագիրը, ինչպես կարելի է տեսնել, չի հստակեցրել, թե ում է նվիրվել ձեռք բերված մուլքը: Կարծում ենք, որ այստեղ «վախմ» բառը գործածվել է միջնադարյան սկզբնաղբյուրներից մեզ հայտնի՝ «եկեղեցուն արված ընծայ, նվեր, կտակ» իմաստով, որը հանդիպում է նաև *ոխով, ոխմ, վաքմ* և նման այլ բառատարբերակներով³⁰ (հմմտ. «Վան-

²⁷ Շահագիզ 2003, 56-58:

²⁸ Հակոբյան 1971, 348-349:

²⁹ Շահագիզ 2003, 162:

³⁰ Մալխասեանց 1945, 288:

քիս իմ մուքն տվինք վախմն, ով խաբանի, Աստուծոյ դատի»³¹, «Կաման Աստուծոյ են՝ Սերոր արեղէս առի Բաշարաթի հողն՝ ջաղացի գունն, տվի վախմ Սուրբ Աստուածածնիս. ով հակառակի, անիծած է»³²): Մեր համոզմամբ, Գրիգոր խոջան ձեռք է բերել քաղաքապատկան որոշ կալվածքներ կամ դրանց նկատմամբ իրավունքներ և դրանք ընծայել է Կաթողիկե եկեղեցուն, որի հոգաբարձուն էր ինքը, որպես հիշատակ իր ծնողների: Սրանով, սակայն, չեն ավարտվել խոջայի բարեգործությունները եկեղեցու համար. նա մեծ ծախքով հիմքից կառուցել է նաև մի ժամատուն (տե՛ս ստորև), եկեղեցուն արել է թանկարժեք նվիրատվություններ՝ եկեղեցական սպասքի, անհրաժեշտ գույքի և ձեռագիր մատյանների տեսքով:

Նկատենք, որ ներկայումս Երևանի Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկի անկյունում՝ Ս. Աննա եկեղեցական համալիրի մեջ ներառված Ս. Աստվածածին փոքր եկեղեցու կառուցումը թվագրվում է ամենաուշը XIII դարով: Ժամանակի ընթացքում այն քանիցս նորոգվել է, արվել են նաև որոշ հավելումներ: Փոքր եկեղեցուն կից եղել է նաև գմբեթավոր ավելի մեծ եկեղեցի, որը տեսնում ենք ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի ուղեգրության մեջ զետեղված փորագրապատկերում (հեղինակ՝ Ժ. Գրելո)³³: Թերևս այս եկեղեցին էլ եղել է Երևանի Ս. Կաթողիկեն, որի վաղագույն հիշատակումները XVI-XVII դարերից են: Շարդենն այն հիշատակել է «Catovike» ձևով³⁴: Եկեղեցական համալիրի Կաթողիկե Ս. Աստվածածին երկանվանումն էլ պայմանավորված է այս հանգամանքով³⁵: Ըստ ամենայնի, մեծ եկեղեցին հիմնովին քանդվել է 1679 թ. ավերիչ երկրաշարժից, իսկ կանգուն մնացած Ս. Աստվածածին փոքր եկեղեցին որպես ավագ խորան է ծառայել երկրաշարժից հետո՝ 1693-1695 թթ. կառուցված ընդարձակ և եռանավ սրահով եկեղեցու համար: 1936-1937 թթ. Երևանի քաղխորհրդի որոշմամբ քանդվել է ուշմիջնադարյան այդ եռանավ սրահը, որի շնորհիվ ամբողջությամբ բացվել է Ս. Աստվածածին եկեղեցին³⁶:

³¹ Դիվան հայ վիմագրության 1973, 60, արձ. 261:

³² Դիվան հայ վիմագրության 1967, 57, արձ. 150:

³³ Шарден 1902 (ներդիր՝ գրքի վերջում):

³⁴ Chardin 1811, 163.

³⁵ Ղաֆադարյան 1975, 26:

³⁶ Ղաֆադարյան 1975, 23-24: Տե՛ս նաև Հակոբյան 1969, 269-270, Сивков 1962, 183-197:

Գալով եկեղեցու Կաթողիկե անվանը՝ կարելի է ենթադրել, որ ժամանակին այն եղել է Երևանի գլխավոր կամ մայր եկեղեցին³⁷, որտեղ, ինչպես նշում է XIX դ. ճանապարհորդ Հենրի Լինչը, պարսկական տիրապետության օրոք պատարագ են մատուցել հայոց կաթողիկոսները³⁸: Երևանի գլխավոր եկեղեցուն մոտ են եղել նաև եպիսկոպոսարանի շենքը և, ամենայն հավանականությամբ, «Երկուերեսնի» անունով հայտնի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին³⁹: Թերևս քաղաքի գլխավոր եկեղեցու հանգամանքով պետք է բացատրել Գրիգոր խոջայի այսչափ ուշադրությունը Երևանի Կաթողիկեի նկատմամբ: Այս առումով պակաս նշանակություն չի ունեցել և այն փաստը, որ խոջան միաժամանակ եղել է նույն եկեղեցու հոգաբարձուն կամ հոգաբարձուներից մեկը:

Ցավոք, հիշատակարանում արձանագրված չէ եկեղեցու ժամատան կառուցման թվականը: Նկատելի է, որ եկեղեցու և նրա շրջակայքի պեղումները, պահպանված արձանագրությունները կամ նրանց բեկորները ցույց են տվել, որ տեղում ոչ թե մեկ, այլ առնվազն երկու անգամ է ժամատուն կառուցվել՝ 1609 և 1642 թթ.⁴⁰: Թ. Հակոբյանի կարծիքով՝ Գրիգոր խոջայի ծախքով հիմքից կառուցվել է 1609 թ. ժամատունը: Իր կարծիքը նա հիմնավորում է Կ. Ղաֆադարյանի վերձանած՝ նույն թվականի մի արձանագրությամբ, որից քաղվածաբար ներկայացնում ենք մեզ հետաքրքրող հատվածները. «...Շնորհին Աստուծոյ ես՝ Գրիգորս՝ որդի Թեզագուլենց Մարգարին, եւ ամուսին իմ՝ պարոն Խաթուն, միաբանեցաք եւ շինեցաք ժամատունս ի հիմանց, եւ այլ բազում արդիւնս արար[ա]ք ի դրան տաճարիս...: Թվին ՌԾԸ (1609): Յակոբ գրիչս յիշեցէ՛ք»⁴¹: Մեզ հայտնի չէ, թե որն է պատմաբանի կովանը 1609 թ. այս ժամատունը Գրիգոր խոջային վերագրելու հարցում, սակայն ակնհայտ է, որ արձանագրության մեջ հիշատակված Թեզագուլենց Մարգարի որդի Գրիգորը չի կարող նույնացվել Մոծակենց Արզումբեկի որդի խոջայ Գրիգորի հետ: Տարբեր են նաև երկու Գրիգորների կանանց անունները:

³⁷ Մաղաքիա արքեպս. Օրմանյանը նշում է, որ *կաթողիկե* անունն են ստացել մայր եկեղեցիները, որոնց միաժամանակ բնորոշ է եղել սրածայր գմբեթը, հմմտ. Օրմանեան 1979, 142-143:

³⁸ Лич 1910, 276.

³⁹ Հարությունյան Ա. 2021:

⁴⁰ Ղաֆադարյան 1975, 28:

⁴¹ Հակոբյան 1971, 357: Տե՛ս նաև Ղաֆադարյան 1975, 139, արձ. 3:

Ինչ վերաբերում է 1642 թ. ժամատան կառուցումը Գրիգոր Խոջային վերագրելուն, ապա պետք է ասել, որ չնայած ժամանակային տեսանկյունից սա առավել հավանական էր թվում, սակայն դժվարություն էր հարուցում այն հանգամանքը, որ մեզ հայտնի չէր՝ արդյոք օտարությունից վերադարձել էր Խոջան նշյալ թվականին, թե՞ ոչ. Երևանում նրա հաստատման միակ վկայությունը 1652 թ. գրված հիշատակարանն էր: Բարեբախտաբար, Արարատի մարզի Բուրաստան գյուղի Ս. Հակոբ եկեղեցում վերջերս հայտնաբերված խաչքարի 1642 թվակիր արձանագրությունը փարատեց է մեր կասկածը (նկ. 1): Խոշոր և գեղեցիկ երկաթագրով վիմագրում, որը հմտորեն փորագրված է երբեմնի ագուցված խաչքարի⁴² աջ եւ ձախ կողմերում, կարդում ենք. «Յ(ի)շ(ա)տ(ա)կ է ս(ուր)բ խ(ա)չս Արզունբէկի որդի խ(օ)ճ(այ) Գ(ր)իգ(որ)ին եւ կողակից Հունիիսանին. թվին ՌՂԱ. (1642)»:



Նկ. 1. Խաչքար, 1642 թ., Բուրաստան գյուղ, Ս. Հակոբ եկեղեցի

⁴² Խաչքարի նախնական տեղը հայտնի չէ, սակայն դատելով վերջինիս չափերից, ձևից և խաչքարի կողային հատվածների կտրվածքներից, կարելի է վստահորեն նշել, որ այն ժամանակին ագուցված է եղել որևէ պատի մեջ: Խաչքարի մասին տեղեկացել ենք մեր գործընկեր Արսեն Հարությունյանից, ապա կապվել ենք Բուրաստան գյուղի հոգևոր հովիվ տեր Գևորգ Աբյանի հետ, որը սիրով մեզ տրամադրեց լուսանկարը և անհրաժեշտ տեղեկությունները: Շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերոջը՝ իրագեկելու, ինչպես նաև տեր Գևորգին՝ ցուցաբերած աջակցության համար:

Այս եզակի հիշատակության շնորհիվ առավել քան հավանական է դառնում այն, որ 1642 թ. ժամատունը կառուցվել է Գրիգոր խոջայի մեկենասությամբ: Մյուս կողմից՝ պարզ է արդեն, որ առնվազն 1642 թ. խոջան ոչ միայն վերադարձել էր Լեհաց երկրից, այլև ամուսնացած էր: Փաստորեն, այս արձանագրությունից ուղիղ 10 տարի անց գրված հիշատակարանից կարելի է նկատել նաև, որ խոջան զավակներ չի ունեցել:

ՄՄ N 6231 Հայսմավուրքի հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ Գրիգորն աչքի է ընկել շինարարական մեկ այլ գործով ևս: Կարապետ գրչի խոսքով՝ «Ա. (1) կամուրճ շինեաց Փարաքարայ ջրին վերայ»⁴³: Ցավոք, նշյալ կամրջի մասին մեզ հայտնի չեն լրացուցիչ տեղեկություններ, սակայն, ամենայն հավանականությամբ, խոսքը Փարաքարի ջրանցքի վրա XVII դ. առաջին կեսին կառուցված մի կամրջի մասին է, որի ներկա տեղորոշումը պարզ չէ:

Հատկանշական է, որ Փարաքարի կամրջից բացի՝ Գրիգոր խոջայի դրամական միջոցներով ավելի ուշ՝ 1664 թ., Քասախ գետի վրա հիմքից կառուցվել է ևս մեկ կամուրջ, որի մասին տեղեկանում ենք արդեն ոչ թե նշյալ հիշատակարանից, այլ Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն»-ից: Ըստ պատմագրի՝ Աշտարակի մերձակայքում՝ Քասախ գետի վրա կառուցված հին կամուրջը, որն ուներ հույժ կարևոր նշանակություն՝ «քանզի բազում գաւառաց եւ բազում ճանապարհաց անցուրդ է», այլևս պիտանի չէր գործածության համար, քանի որ հնացել էր, խախտվել և մասամբ քարաթափ եղել: Երևանցի Գրիգոր խոջան ձեռնամուխ է եղել ոչ թե այդ հին կամրջի նորոգմանը, այլ ամբողջությամբ նորի կառուցմանը: Ահա թե ինչ է գրում Դավրիժեցին.

«Վասն որոյ բարեպաշտ եւ քրիստոսասէր այրն՝ մահտեսի խօջայ Գրիգորն, զոր մականուամբ Մոծակենց Գրիգոր ասէին, որ է բուն տեղացի յԵրեւան քաղաքէն: Սա զհին կարմունջն, որ մերձեալ էր ի փլանիլ, քակեաց եւ ապա փոխեաց զտեղն եւ սկսաւ ի հիմանէ նոր շինել, ամուր եւ հաստատուն կրով եւ գործուն քարիւ՝ ըստ պատշաճի եւ բարեվայելույ՝ յօրինեալ ի հիմանէ մինչեւ ցկատարումն՝ վասն հոգւոյ իւրոյ փրկութեան եւ վասն առ Աստուած յուսոյն, բազում աշխատանս կրեալ եւ բազում զանձս

⁴³ Հակոբյան 1984, 501:

ծախեալ մինչեւ ցկատարումն հասուցեալ, ի թուականիս մերում ՌՃԺԳ (1664) ի փառս Աստուծոյ»⁴⁴:

Նկատենք, որ Քասախ գետի վրա կառուցված այս կամուրջը ուշ-միջնադարյան Հայաստանի կամրջաշինության լավագույն նմուշներից է. այսօր էլ այն կանգուն է և հիացնում է այցելուներին իր գեղեցկաշեն և եռակամար թռիչքներով⁴⁵: Առանձնանշելի է, որ կամուրջն ունեցել է նաև շինարարական արձանագրություն, որն ավելի ուշ եղծվել և անընթեռնելի է դարձել⁴⁶, ուստի՝ Դավրիժեցու վկայությունը կամրջի և այն կառուցողի մասին մեզ հայտնի միակ սկզբնաղբյուրն է: Կամրջի շինարարության վերաբերյալ ուշագրավ մի բանահյուսական պատառիկ է վկայակոչում Սուրեն Սաղումյանը: Ըստ ժողովրդական ավանդության՝ կամրջի կառուցումը հաջողությամբ ավարտին է հասել միայն այն ժամանակ, երբ նրա որմի մեջ ամփոփել են մի որբ աղջկա⁴⁷:

Գրիգոր Խոջայի այս կամրջաշինությունը առիթ է տվել որոշ շփոթների, որոնք պարզաբանման և հստակեցման կարիք ունեն: Առանձին ուսումնասիրողներ Մոծակենց Գրիգոր Խոջային նույնացրել են Խոջա Փլավ անունով հայտնի քանաքեռցի մեկ այլ մեծահարուստի հետ, որը նույնպես աչքի է ընկել կամուրջ(ներ)ի շինարարությամբ: Ստուգելով բոլոր հիշատակումները, ինչպես նաև անուղղակի վկայությունները՝ որևէ կապ չտեսանք այս երկու գործիչների միջև, ուստի կարծում ենք, որ նրանց նույնացումն անտեղի է: Փորձենք հասկանալ՝ ինչու:

Գրիգոր Մոծակենցի ծախքով կառուցված Աշտարակի վերոնշյալ կամուրջը ժամանակին արտաքնապես նմանեցվել է Օշական գյուղի և Քանաքեռի կամուրջներին: Մասնավորապես, XIX դ. երկրորդ կեսի նշանավոր տեղագիր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը գրում է, որ Օշականի, Աշտարակի և Քանաքեռի կամուրջները միանման են կառուցված, իսկ նրանց արձանագրությունները եղծված են⁴⁸: Հիմք ընդունելով այս տեղեկությունը՝ հետազոտող Գեղամ Ասատրյանն իր ուսումնասիրության մեջ եկել է այն եզրակացության, որ Գրիգոր Մոծակենցը կառուցել է ոչ միայն Աշտարակի, այլև Օշականի և Քանաքեռի կամուրջները:

⁴⁴ Դավրիժեցի 1990, 285:

⁴⁵ Հարությունյան 1960, 114-118:

⁴⁶ Շահխաթունեանց 2014, 261:

⁴⁷ Սաղումյան 1998, 85, 117:

⁴⁸ Սմբատեանց 1895, 221:

Շարունակելով միտքը՝ ուսումնասիրողը նշում է, որ Երևանի երբեմնի նշանավոր «Կարմիր» կամուրջը ևս Գրիգոր խոջան է կառուցել⁴⁹։ Այս կարծիքի համար հիմք է ծառայել Երևանցի մեծահարուստ վաճառականի մասին հայ ճարտարապետության խորագիտակ Թորոս Թորամանյանի այն դիտարկումը, ըստ որի՝ Գրիգոր Մոծակենցին «աշտարակցիք ավանդաբար անվանում են քանաքեռցի Խոջա Փլավ»⁵⁰։ Իսկ այս անունը մեզ հայտնի է. իսկապես, խոջա Փլավի անվան հետ է կապվում Երևանի «Կարմիր» կոչվող կամրջի կառուցումը Հրազդան գետի վրա։ Ե. Շահագիզի վկայությամբ՝ կամուրջը, ի պատիվ կառուցողի, կոչվել է նաև «Խոջա Փլավի կամուրջ»⁵¹։

Այսպիսով, ստացվում է, որ Գրիգոր Մոծակենցը մի կողմից նույնացվել է Խոջա Փլավի հետ, մյուս կողմից՝ նրան է վերագրվել Օշականի, Քանաքեռի և Երևանի կամուրջների շինարարությունը։ Մինչդեռ Օշականի կամուրջն ունի շինարարական արձանագրություն, համաձայն որի՝ այն կառուցվել է Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա. Եղեսացու (1691-1705 թթ.) հովանավորությամբ։ Մեջբերում ենք արձանագրությունն՝ ըստ Հովհաննես Շահխաթունյանցի. «Յիշատակ է կամուրջս տեսոն Նահապետ կաթողիկոսին սուրբ Էջմիածնի. ՌՃԾԵ (1706) թվին»⁵²։ Այլ խոսքով, Օշականի կամուրջն առնչություն չունի Մոծակենց Գրիգորի հետ։ Ինչ վերաբերում է Խոջա Փլավ և խոջա Գրիգոր գործիչների անհարկի նույնացմանը, ապա կարծում ենք, որ անվանի ճարտարապետ Թ. Թորամանյանի այս միտքը գալիս է, թերևս, հայագիտության մեծ նահապետ հայր Ղևոնդ Ալիշանի «Այրարատ» երկասիրությունից, որտեղ իսկապես առկա է այս շփոթը. մխիթարյան անխոնջ մշակը նշում է, որ Աշտարակի կամրջի շինարարին «ռամիկն կոչէ Խօջայ Փլաւ ոմն հայ»⁵³։ Նկատենք, որ «Այրարատ»-ի այս վկայակոչումով Խոջա Փլավը, որպես Աշտարակի կամրջի շինարար, տեղ է գտել նաև «Հայոց անձնանունների բառարան»-ում⁵⁴։ Բայց, ինչպես տեսանք, Աշտարակի կամուրջը կառուցել է Գրիգոր խոջան, որի մասին վկայում է դեպքերի ժամանակակից Առաքել

⁴⁹ Ասատրյան 1990, 44:

⁵⁰ Թորամանյան 2013, 362:

⁵¹ Շահագիզ 2003, 190-191:

⁵² Շահխաթունեանց 2014, 260:

⁵³ Ալիշան 1890, 185:

⁵⁴ Աճառեան 1962, 209:

Դավրիժեցին: Եվ վերջապես, 1694 թ. խաչքարային մի հիշատակագրության համաձայն՝ թերևս նույն Խոջա Փլավի իսկական անունը եղել է Հակոբ. «Թվին ՌՃԽԳ (1694): Յիշատակ է սուրբ խաչս Յակոբի, որ մականուամբ Փլաւ ասի...»⁵⁵: Սույն խաչքարն այժմ Երևանի պատմության թանգարանում է:

Այսպիսով, պարզելով այս շփոթի աղբյուրը, հավանական ենք համարում, որ այն առաջ է եկել մի կողմից այս երկու գործիչների «խոջա» պատվանվան, մյուս կողմից՝ նրանց շինարարական գործունեության ընդհանրություններով⁵⁶: Այլապես դժվար է պատկերացնել, թե ինչու ՄՄ N 6231 Հայսմավուրքի գրիչ Կարապետ Մոկացին, որն այդքան հանգամանալից թվարկում է Մոծակենց Գրիգորին և նրա ընտանիքին առնչվող տեղեկությունները, լռում է ենթադրաբար նրա «Փլավ» մականվան մասին: Ճիշտ նույնը կարելի է ասել նաև պատմագիր Առաքել Դավրիժեցու մասին, որը մանրամասն հիշատակում է միայն Աշտարակի կամրջի կառուցման իրադարձությունը, հարկ համարում առանձին շեշտել Գրիգոր խոջայի Մոծակենց մականունն ու նրա՝ Երևանցի լինելը, բայց խոսք անգամ չի ասում ոչ պակաս արժեքավոր և իր գեղեցկությամբ Աշտարակի կամրջին չզիջող Երևանի «Խոջա Փլավ» կամ «Կարմիր» կամրջի մասին:

Դառնալով խոջա Գրիգորին՝ նշենք, որ շինարարական ծավալուն գործունեությունից զատ, ինչպես վկայում է նշյալ Հայսմավուրքի գրիչներից Կարապետ Մոկացին, խոջայի միջոցներով գնվել ու Երևանի Կաթողիկե եկեղեցուն են ընծայվել ծիսական անհրաժեշտ պարագաներ և մեծածախս ձեռագրեր. քննվող Հայսմավուրքից բացի՝ նա եկեղեցուն նվիրել է մեկական ճաշոց, Ատենի Սաղմոսարան և մագաղաթյա ոսկեկազմ Ավետարան, ընդհանուր քանակը՝ 4 ձեռագիր:

Ըստ ամենայնի՝ Գրիգոր խոջայի նվիրատվություններն ու բարեգործությունները ծննդավայր Երևանում և նրա մերձակայքում այսքանով չեն սահմանափակվել, սակայն մեզ հասած այս տեղեկություններն էլ բավա-

⁵⁵ Ղաֆադարյան 1975, 216, արձ. 252:

⁵⁶ Չենք բացառում, իհարկե, որ նշյալ գործոններով պայմանավորված՝ իին աշտարակցիներն իսկապես շփոթել են այս երկու գործիչներին, սակայն, ինչպես նշում է Ե. Շահազիզը, Դավրիժեցու մանրամասն տեղեկությունները կասկածի առիթ չեն տալիս, որ Աշտարակի կամուրջը կառուցել է Գրիգոր Մոծակենցը: Հմմտ. Շահազիզ 1987, 179-180:

րար են նրան XVII դ. երևանյան նշանավոր և ազդեցիկ գործիչներից համարելու համար:


ՄՄ N 6231 Հայսմավուրքը. գրչավայրից Մաշտոցյան Մատենադարան

Գաղտնիք չէ, որ մեզ հայտնի հազարավոր հայերեն ձեռագիր մատյաններ իրենց ներկա հավաքածուներ մուտք են գործել ամենատարբեր ճանապարհներով՝ ժամանակի ընթացքում հաղթահարելով զանազան փորձություններ, փրկվելով հրից ու սրից, գողացվելով, ապա փրկագնվելով և այդպես շարունակ: Հետաքրքիր է, որ անկախ գրչության վայրից և ժամանակից՝ հայերեն ձեռագրերը հիմնականում բախտակից են եղել միմյանց, և քննվող Հայսմավուրքը դրա վառ օրինակներից է: Մատյանում պահպանված հիշատակարան-հիշատակագրությունների շնորհիվ ստորև, ըստ հնարավորի, փորձել ենք պարզել այն ուղին, որով անցել է ձեռագիրն իր ստեղծման օրից և վերջնական հանգրվանը գտել Մաշտոցյան Մատենադարանում՝ ստանալով իր ներկա 6231 թվահամարը:


Քննվող ձեռագիրն ունի 38×24 սմ մեծություն, գրված է համաչափ ելկանոնավոր բոլորգրով, գրությունը երկայուն է, տողերի քանակը՝ 37 (նկ. 2): Հայսմավուրքը բաղկացած է 658 թերթից և պատկանում է «ծերենցյան» կոչվող խմբագրությանը⁵⁷: Մատյանն ունի համեստ զարդանկարչություն, որն արտահայտված է գերազանցապես բուսական և թռչնային լուսանցազարդերով և հանգուցագիր ու թռչնագիր զարդագրերով: Զարդանկարների ներկապնակը ևս աչքի չի ընկնում վառ ու հարուստ գույներով. գործածված են կարմիրը, կապույտը, կանաչը և նարնջին, որոնք տամկության հետևանքով տեղ-տեղ խունացած են: Ձեռագրի տարբեր թերթերին առկա են ոչ միայն խոնավության, այլև մոմի, կաթիլքի և այրվածքի հետքեր: Եզրային հատվածները տեղ-տեղ պատռված են: Ձեռագրի որոշ թերթեր սխալ հերթականությամբ են. այս հետևանքությունն առաջացել է մատյանի առաջին նորոգման ժամանակ (XX դար):

Ձեռագրի ընդօրինակման հանգամանքները, ժամանակը, վայրը և անհրաժեշտ մյուս տեղեկությունները, գրչական սովորույթի համաձայն, զետեղված են մատյանի վերջում դրված գլխավոր հիշատակարանում,

⁵⁷ Հմմտ. Եգանյան, Չեյթունյան, Անթաթյան 1970, 276: «Ծերենցյան» խմբագրության համար հմմտ. [Հայսմավուրք] 1730:



Նկ. 2. ՄՄ, N 6231, 99ա - Մի էջ ձեռագրից



Նկ. 3. ՄՄ, N 6231, 13բ - հետագա հիշատակագրություն

որը զբաղեցնում է 655բ-658ա էջերը: Գրիչ Կարապետ Մոկացին, որը մատյանի երկրորդ և հիմնական մասի ընդօրինակողն է (Կարապետ գրիչն ընդօրինակել է 49-52 և 54-658 թերթերը, իսկ 1-48 և 53 թերթերը ընդօրինակել է Ստեփանոս գրիչը⁵⁸), գրում է. «Արդ, եղեւ զրաւ գրչագրութեանս սորա ի յերկիրս Այրարատեան, ի գեղս, որ կոչի Նորգ՝ ընդ հովանեաւ Սուրբ Սիմէոն ծերոյն եւ Սուրբ Աստուածածնին, ի թուաբերութեանս Հայկազեան տումարի ՌՃ եւ մէկ (1652) թուի...»⁵⁹:

Շարունակելով հիշատակարանը՝ գրիչը թվարկում է ժամանակի հոգևոր առաջնորդներին, ապա շարադրում է մատյանի պատվիրատու Գրիգոր խոջային, նրա գործունեությանն ու ընտանիքի անդամներին առնչվող և մեզ արդեն հայտնի տեղեկությունները: Գրիչն այնուհետև խնդրում է հիշել իրեն և իր հարազատներին. «Կրկին անգամ աղաչեմ՝ յիշեցէ՛ք ի Տէր զանախտան գծողս՝ զԿարապետ դպիրս եւ զհայրն իմ՝ զմահդասի Սէթն եւ զմայրն՝ զԳօզալաղէն եւ զամենայն արեան առու մերձաւորսն»⁶⁰:

Գլխավոր հիշատակարանից զատ, մատյանի տարբեր էջերին՝ հիմնականում միջբնագրային հատվածներում, կան գրչության ժամանակի և հետագայի մի քանի տասնյակ մեծ ու փոքր հիշատակարան-հիշատակագրություններ, որոնք հայկական ձեռագրական ավանդույթում սովորական են Հայսմավուրք մատյանների համար⁶¹: Դրանցից մի քանիսը ձեռագրի գրչությունը մեկնարկած Ստեփանոս գրչի հիշատակարաններն են, ինչպես, օրինակ՝ «Քրիստոս Աստուած, բարեխօսութեամբ Մօր քո եւ կուսի, ողորմեա՛ մեղսամակարթ Ստեփանոս գծողի, մանաւանդ խօջայ Գրիգորին եւ ամուսնոյն՝ Հուսիխանին, եւ ծնօղացն՝ պարոն Արզումբէկին եւ Եղիսաբէթին, եւ Եղբօրն՝ խոջա Աւետիսին եւ զարմից սոցին»⁶²:

Նկատենք, որ միջբնագրային հատվածների միջև զետեղված այս փոքրիկ և, որպես կանոն, նույնաբովանդակ հիշատակագրությունների մի

⁵⁸ Այս տեղեկությունը քաղել ենք ձեռագրի նախնական նկարագրությունից, որն առայժմ անտիպ է: Աշխատանքն իրականացրել է Մատենադարանի ձեռագրագիտության բաժնի աշխատակից Հասմիկ Իրիցյանը: Շնորհակալ ենք մեր գործընկերոջը, ինչպես նաև Ձեռագրագիտության բաժնի վարիչ և Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պ.գ.դ. Գևորգ Տեր-Վարդանյանին՝ անտիպ նկարագրությունը մեզ տրամադրելու համար:

⁵⁹ Հակոբյան 1984, 500:

⁶⁰ ՄՄ, N 6231, 658ա: Տպագիր հիշատակարանում բացակայում է գրչի հայրանունը. հմմտ. Հակոբյան 1984, 502:

⁶¹ Հմմտ. Հարությունյան 2019, 73-74:

⁶² Հակոբյան 1984, 499:

մասը հետագայում ամբողջությամբ կամ մասնակի ծածկվել է փոքրիկ թերթիկներով, որոնց վրա հավելվել են հետագա ստացողի սեղմ և դարձյալ նույնաբովանդակ հիշատակագրությունները (13բ, 16ա, 74ա, 96բ, 99ա, 102ա եւ այլուր): 13բ էջի գրչության հիշատակարանի վրա փակցված թերթիկին կարդում ենք. «Ըստացող տառիս Ավաքին եւ ծնողացն իմոց՝ Մարքարին եւ Մարիանին, քվերն իմոյ՝ Նազուին, եւ կողակցին իմոյ՝ հանգուցեալ Չինարին, եւ ամենայն արեանարու» (նկ. 3): Հիշատակարանները ծածկելու այս երևույթը եզակի չէ. չնայած դրա անընդունելի լինելուն և դրա դեմ գրիչների հաճախակի թախանձանքներին, զանազան անեծքների ու կենաց գրից ջնջվելու սպառնալիքներին՝ այնուամենայնիվ, հետագա ստացողներն իրենց անունները գրելու նպատակադրումով վնասել են գրչության հիշատակարանները, ծածկել կամ քերել են դրանք⁶³: Քննվող Հայսմավուրքը ևս բացառություն չէ այս տեսանկյունից:

Վերոհիշյալ Ավագի թողած տասնյակ հիշատակագրությունների մեջ արժեքավոր է հատկապես 658բ էջինը, որից տեղեկանում ենք, որ ծնունդով գանձակցի Ավագը (Գանձակից լինելու մասին դարձյալ Ավագի հիշատակարանից ենք տեղեկանում. 658ա՝ «ես մեղուցեալ Աաքս, որդի Մարգարին, ի յերկրէն Գանջայու...») 1723 թ. սույն մատյանը գերեվարված է տեսել Արգրում (էրգրում, իմա՝ Կարին - Խ.Հ.) քաղաքում, փրկագնել է այն, բերել և նվիրել է Ս. Կաթողիկե եկեղեցուն, ըստ ամենայնի՝ Երևանի. «Թվին ՌՃՀԲ.ումն (1723) առի այս Այսմ[աւուրքս] ես՝ մեղաւոր Ավաքս, [Ա]րգրում քաղաքումն, որ էր սայ եսիր (իմա՝ գերի - Խ.Հ.) եւ գերի ի ձեռս օսմացու եսկիչարու (իմա՝ զինվոր - Խ.Հ.), ազատեցի կամօքն Աստուծոյ ի հալալ ապրանանց իմոց մեծաւ փափաքանօք, բերի զսա եւ յետու յիշատակ ի դուռն Սուրբ Կաթողիկէ եկեղեցուն»⁶⁴:

Հիշատակագրության համաձայն՝ գրչությունից 71 տարի անց Նորքում գրված ձեռագիրը մեզ անհայտ ճանապարհով հայտնվել է Կարինում և գերության մեջ է եղել թուրք զինվորների ձեռքին: Իհարկե, սա պատահական չէր, եթե նկատի ունենանք, որ XVII-XVIII դդ. Արարատյան

⁶³ Հմմտ. Հարությունյան 2019, 186-197:

⁶⁴ Հիշատակարանների ժողովածուում ՌՃՀԲ (1723) թվականը ներկայացված է ՌՃԵ (1656) ձևով, որը թերևս գալիս է Մատենադարանի «համառոտ» ցուցակից, որտեղ հետագայի այս հիշատակարանի թվականն ընթերցված է ՌՃԵ: Հմմտ. Եզանյան, Զեյթունյան, Անթաթյան 1970, 276, Հակոբյան 1984, 719: Ճշտումը՝ ձեռագրի նկարագրող Հ. Իրիցյանի:

դաշտը և, մասնավորապես, Երևանը, եղել են թուրք-պարսկական ուժերի պատերազմական գործողությունների թատերաբեմ: Կատաղի մարտերը Երևանի բերդի և նրա մերձակայքի համար նկարագրված են ժամանակի հայ և օտար սկզբնաղբյուրներում, որոնք միաժամանակ վկայում են հայության անելանելի դրությունը՝ տեղի ունեցող կողոպուտը, վրա հասած թանկությունը, սովը և այլն: Դժվար է վստահորեն նշել, թե ձեռագիրն այս օրերին երբ է գողացվել-տարվել Կարին, սակայն, հավանաբար, դա տեղի է ունեցել XVIII դ. երկրորդ տասնամյակին՝ թուրք-պարսկական նոր թափ ստացած մարտերի ժամանակ, քանի որ XVII դ. 40-ական թթ. մինչև XVIII դարասկիզբ հարաբերական անդորր էր Երևանում⁶⁵: Ըստ որում՝ սա նույն ճակատագրին արժանացած ժամանակի միակ ձեռագիրը չէր. XIII դ. գրչագրված ՄՄ N 1930 մատյանը 1724 թ. ևս գերեվարվել է թուրքական զորքի՝ դեպի Երևան կազմակերպած հերթական արշավանքի ժամանակ. «Թվին ՌՃՀԳ (1724), որ փաշեն եկն ի վերա Երեւանայ, եւ գիրքս գերի անկաւ ի ձեռն քուրթ Օսման աղային Ղիադինեցոյ», - կարդում ենք նշյալ ձեռագրի հետագա հիշատակարանում⁶⁶:

Այսպիսով, 1723 թ. Ավագը, ձեռագիրը գերությունից ազատելով, երկրորդ կյանք է տվել մատյանին՝ այն նվիրաբերելով Կաթողիկե եկեղեցուն՝ ի հիշատակ իրեն և իր հարազատներին: Հարկ է ամեն դեպքում նկատել, որ գանձակցի փրկագնողը Կաթողիկե եկեղեցին հիշատակելիս չի արձանագրել նրա գտնվելու վայրը, սակայն առավել հավանական է, որ խոսքը հենց Երևանի Կաթողիկե եկեղեցու մասին է: Ըստ ամենայնի՝ փրկագնումից հետո Ավագը ցանկացել է մատյանը վերադարձնել իր տեղը և բերելով Երևան՝ նվիրել է քաղաքի մայր եկեղեցուն, որին և այն ընծայված է եղել ի սկզբանե⁶⁷: Որ խոսքը Երևանի եկեղեցու մասին է, անուղղակի կերպով հաստատվում է նույն ձեռագրի 658բ էջի մեկ այլ սեղմ հիշատակագրությամբ, որը 1771 թ.՝ փրկագնումից 48 տարի անց, թողել է

⁶⁵ 1630-ական թվականների թուրք-պարսկական կատաղի մարտերը ժամանակավորապես դադարել են 1639 թ. հաշտությամբ, որը տևել է մի քանի տասնամյակ: Այդ ընթացքը քիչ թե շատ բարենպաստ է եղել նաև հայ ժողովրդի և հատկապես Արարատյան դաշտի բնակիչների համար: Տե՛ս Հակոբյան 1971, 50-52: Պատահական չէ, որ քննվող ձեռագրի հիշատակարաններում ևս այս կոիվների մասին գրեթե ոչինչ չի նշվում:

⁶⁶ Մայր ցուցակ Մատենադարանի 2012, 608:

⁶⁷ «Որ ընծայեաց զայս Յայսմաուրս եւ զայլ նուէրս, որ ի վերոյ գրեալ կայ, ի հալալ արդեանց իւրոյ ի դուռն Կանթուղիկէի Սուրբ եկեղեցոյ», - գրում է Կարապետ գրիչը (ՄՄ, N 6231, 658ա):

ոմն տեր Հովհաննես քահանա (տեր Օվանէաս ձևով): Այս հիշատակագրության համաձայն՝ Հայսմավուրքը գտնվելիս է եղել արդեն Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, այսինքն՝ Կաթողիկե եկեղեցուց այն տեղափոխվել է Երևանի մեկ այլ եկեղեցի. «Ես՝ տեր Օվանէաս քահանայս, գրեցի Սուրբ Սարգրսի եկեղեցուն մէջն, այս է իմ օրհնվելու թին՝ ՌՄԻ.ին՝ (1771), փետր[ուարի] ԻԶ.ին (26)՝ Տնտես կիրակին»:

Հայսմավուրքի տարբեր էջերին և լուսանցքներին կան թվակիր և անթվական այլ հիշատակագրություններ ևս՝ գրված նոտրգրով ու շղագրով: Մասնավորապես, 1822 թ. հունվարին Անդրեաս Մկրտչյան (658 ք), 1846 թ. մայիսի 14-ին Քիարիմ Զեյնալոդինօղլուց (285 ք, 451 ք), 1882 թ. մահտեսի Սարգիս Դատյանց (593 ք) անուններով անձինք թողել են սեղմ և բուն ձեռագրի պատմությանը կամ գտնվելու վայրին չառնչվող նշումներ: XVIII դարակեսով կարելի է թվագրել նաև գրչության ժամանակի մի շարք հիշատակարանների վրա ժամհար Ավագի (տարբեր է ձեռագիրը փրկագնող Ավագից) փակցրած փոքրիկ թերթիկները, որոնց վրայի գրություններում վերջինս խնդրում է հիշել իրեն, կողակցին և ծնողներին (453ք, 457ա, 459ա, 466ք և այլուր): Ցավոք, վերջինս նույնպես ոչինչ չի նշել տվյալ պահին մատյանի գտնվելու վայրի մասին:

1882 թ. գրության մեջ վերոհիշյալ մահտեսի Սարգիս Դատյանցը հայտնում է, որ երկար գիշերներ է անցկացրել Հայսմավուրքի պատմությունները (իր բառով՝ «առակները») ընթերցելով, ապա ժամանակագրական բնույթի որոշ նշումներ է անում (թվականների ակնհայտ շփոթով)՝ հիշատակելով ռուսական զորքի կողմից Երևանի բերդի գրավման և ռուսթուրքական պատերազմի մասին: Հիշատակագիրը նշում է, որ այդ ընթացքում Երևանում պարենային որոշ ապրանքների թանկություն է եղել: Շարադրանքն ավարտում է 24-ամյա իր որդու հիշատակումով և հիշման արժանի անելու խնդրանքով. «...եւ այս միջոցումն սաստիկ թանկութիւն եղեւ. արադի 12 կրվանքեն (իմա՛ գրվան՝ չափման միավոր. տարա - Խ.Հ.) ծախվեց 5 մանեթ, կինին (իմա՛ գինի)՝ 3 մանեթ, հացի խավվարն (իմա՛ - ծանրության չափ. Երևանում՝ 30 փութ⁶⁸) 200 մանեթ, գարին՝ 1070 մանեթ, ծվի (իմա՛ ձու) հատն՝ 3 կոպեկ: Իմ Մարտիրոս որդույս ամքն են 24 տարեկան, օ՛վ հանդիբողը այսմ գրութ(եա)նս, խնթրեմ ինձ պէս մեղա-(ւ)որին ողորմի յիշե՛ք, Աստուած էլ ձեզ ողորմի»:

⁶⁸ Մալխասեանց 1944, 229: 1 փութը հավասար է եղել մոտավորապես 16 կգ-ի:

Թվակիր այս վերջին հիշատակարանում էլ, ցավոք, հիշատակագիրը չի նշել, թե որտեղ է Հայսմավուրքը պահվել այն պահին, երբ ինքն այն ընթերցել ու իր հիշատակարանն է հավելել: Ակնհայտ է միայն, որ ձեռագիրը շարունակել է գտնվել Երևանում:

Ըստ էության՝ վերջին այս բոլոր հիշատակագրություններում մատյանի գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն կարող էր օգտակար լինել այն հարցի պարզաբանման տեսանկյունից, թե, մասնավորապես, Երևանի որ եկեղեցում է Հայսմավուրքը պահվել Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի՝ 1923 թ. դեկտեմբերի 14-ի որոշումից առաջ, որի համաձայն՝ հավաքվել են Երևանի եկեղեցիներում պահվող ձեռագրերը (ընդհանուր թվով՝ 78 մատյան): Դժբախտաբար, հավաքված այդ ձեռագրերի անտիպ ցուցակում արձանագրված չէ, թե որ մատյանը որ եկեղեցում է գտնվել: Հայտնի է միայն, թե եկեղեցիներից յուրաքանչյուրում որքան ձեռագիր է եղել հավաքման պահին⁶⁹: Ցուցակագրված ձեռագրերի համարակալումից (մեզ հետաքրքրող Հայսմավուրքը նշյալ ցուցակում կրել է 79 թվահամարը⁷⁰) հետո կազմվել է Երևանի եկեղեցիներից հավաքված ձեռագրերի հավաքածուն, որն ավելի ուշ մուտք է գործել Մատենադարանի ձեռագրական «Նոր հաւաքածու»-ի մեջ՝ մաս կազմելով «Խառն ժողովածու»-ի⁷¹:

Դառնալով մեզ հետաքրքրող հարցին՝ առավել հավանական ենք համարում, որ քննվող ձեռագիրը առնվազն 1771 թ. ի վեր շարունակաբար պահվել է Երևանի Ս. Սարգիս եկեղեցում և այդտեղից էլ այլ ձեռագրերի հետ մուտք է գործել վերոհիշյալ ձեռագրական հավաքածու: Այս ենթադրության համար հիմք ենք ընդունել Ե. Շահազիզի հայտնած այն տեղեկությունը, որի համաձայն՝ Հայսմավուրքի հիշատակարանի առաջին հրատարակիչ ավագ քահանա տեր Գրիգոր Սուքիասյանցը եղել է Ս. Սարգիս եկեղեցու սպասավոր⁷², որով էլ բացատրվում է վերջինիս՝ ձեռագրին տեղում ծանոթանալու և դրանից մի հատված հրատարակելու փաստը:

⁶⁹ ՄՄ, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, N 29: Ըստ ցուցակի՝ հիշյալ 78 ձեռագրերը հավաքվել են հետևյալ եկեղեցիներից՝ Ս. Կաթողիկե՝ 25 ձեռագիր, Ս. Պողոս-Պետրոս՝ 20, Ս. Սարգիս՝ 7, Ս. Հովհաննես՝ 21, Զորավոր Ս. Աստուածածին՝ 2, Նորքի եկեղեցուց՝ 3 (ցավոք, եկեղեցին չի հստակեցվում):

⁷⁰ ՄՄ, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, N 29, 2ա:

⁷¹ Եգանյան, Զեյթունյան, Անթաքյան 1965, 120:

⁷² Շահազիզ 2003, 58: Շահազիզի այս տեղեկության աղբյուրը մեզ հայտնի չէ. դրա փոխարենը գիտենք, որ 1906 թ. Գրիգոր քահանան եղել է երբեմնի Ս. Գրիգոր

Այսպիսով, կարծես թե ամբողջանում է մեծադիր այս Հայսմավուրքի պատմությունը. Գրիգոր Մոծակենցի պատվերով 1652 թ. Նորքում ընդօրինակված ձեռագիրը, հավանաբար, նույն դարի վերջին կամ հաջորդ դարի առաջին տարիներին գերեվարվել, տարվել է Կարին, ապա 1723 թ. փրկագնվել և կրկին վերադարձվել է Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցի, որտեղից էլ այն տեղափոխվել է Ս. Սարգիս եկեղեցի, իսկ 1923 թ. Երևանի եկեղեցիներից հավաքված այլ գրչագրերի հետ մուտք է գործել Մատենադարանի ձեռագրական հավաքածու: Հայսմավուրքն այսօր կրում է 6231 թվահամարը:

Հավարտ պետք է նշել, որ մատյանի որոշ թերթեր (652-657) ժամանակին անհայտ պայմաններում անջատվել են ձեռագրից, ապա այլ ճանապարհով կրկին մուտք են գործել Մատենադարան՝ ստանալով 9217 թվահամարը: Ուշագրավ է, որ կրկին այս ձեռագրից անջատված մի քանի այլ թերթեր (622, 635-637, 648) ավելի ուշ հայտնաբերվել են Լվովում և կրկին փոխանցվել Մատենադարանին՝ Ազգային գրադարանի աշխատակցուհի Նինել Ոսկանյանի միջոցով: Այս ամենի մասին տեղեկանում ենք Հայսմավուրքի Ա փեղկի կազմաստառին Մատենադարանի երկարամյա և վաստակաշատ ավանդապահ Օննիկ Եգանյանի՝ 1964 թ. սեպտեմբերի 1-ի գրառումից: Թե երբ և ինչ հանգամանքներում են այս թերթերն անջատվել ձեռագրից, կամ ինչպես են որոշ թերթեր հասել Լվով, պարզ չէ, ենթադրաբար, դա տեղի է ունեցել այն ժամանակ, երբ մատյանը գերեվարված է եղել: Բարեբախտաբար, ձեռագրից անջատված այս բոլոր թերթերը Մատենադարանում վերամիավորվել են մայր ձեռագրին:

Եզրակացություններ

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք վստահաբար նշել, որ հանձին Մոծակենց տոհմի՝ գործ ունենք ուշմիջնադարյան Երևանի մեծահարուստ ընտանիքներից մեկի հետ, որի որոշ ներկայացուցիչներ աչքի են ընկել իրենց բեղմնավոր գործունեությամբ: Հավանաբար, Մոծա-

Լուսավորիչ եկեղեցու (ներկայիս Ե. Չարենցի անվան դպրոցի տեղում, կանգուն է եղել մինչև 1940-ական թթ.): Հմմտ. Հարությունյան 1997, 35) սպասավոր, որի մասին տեղեկանում ենք նույն թվականի փետրվարի 22-ի՝ Էջմիածնի Սինոդի որոշումից. հմմտ. Արարատ, 1906 (3), 203: Թերևս 1906 թ. հետո Գրիգոր քահանան տեղափոխվել է Ս. Սարգիս, որտեղ և առիթ է ունեցել ծանոթանալու Հայսմավուրքին: Տեր Գրիգորից մեզ հայտնի է նաև 1910 թ. մի փոքրածավալ հրատարակություն՝ Սուքիասեանց 1910:

կենց տոհմի պատմությունը ձգվում է մինչև բուն միջնադար: ՄՄ N 6231 Հայսմավուրքի հիշատակարանի շնորհիվ տեղեկանում ենք, որ իր բարեբեր և բեղմնավոր գործունեությամբ Երևանում և նրա մերձակայքում առանձնացել է հատկապես խոջա Գրիգորը, որի նյութական միջոցներով կյանքի են կոչվել շինարարական տարբեր ձեռնարկումներ: Գրիգորի եղբոր՝ Ավետիս խոջայի մասին հիշատակումներից կարելի է եզրակացնել, որ վերջինս ևս ձեռնպահ չի մնացել քաղաքում իրականացվող ծրագրերից: Նշյալ ձեռագրի մեծ ու փոքր հիշատակարանները մեզ թույլ տվեցին նաև կազմել առնվազն XVII դ. առաջին կեսին Մոծակենց ընտանիքի կազմը պատկերող գծագիրը: Մյուս կողմից՝ նույն հիշատակարանները, ինչպես նաև հետագայում ձեռագրի տարբեր հատվածներում թողնված համառոտ գրությունները հիմք եղան մատյանի ստեղծման պատմությանն ու անցած ուղուն առնչվող հանգամանքների բացահայտման համար:

Այսպիսով, կարելի է ասել, որ ՄՄ N 6231 Հայսմավուրքը XVII դարում վերելք ապրող Երևանյան գրչօջախներում ստեղծված լավագույն մատյաններից է, իսկ նրա պատվիրատուն՝ նույն շրջանի երևելի գործիչներից:

Գրականություն

- Աբրահամ Երեանցի 1977, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթութիւններ պատրաստեց հ. Ս. Ճեմճեմեան, Վենետիկ - Ս. Ղազար, 182 էջ:
- Ալիշան հ. Ղ. վ. Մ. 1890, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ - Ս. Ղազար, 590 էջ:
- Աճառեան Հ. 1962, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երեան, ԵՊՀ հրատ., 383 էջ:
- Առաքել Դարիժեցի 1990, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ.Ա. Խանլարյանի, Երևան, ՀԳԱ հրատ., 592 էջ:
- Ասատրյան Գ.Դ. 1990, Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, «Հայաստան», 187 էջ:
- Գասպարյան Ռ. 2007, Ձագավանքի համալիրը և նրա վիմագրերը, Պատմաբանասիրական հանդես, N 1, Երևան, էջ 198-217:
- Դիվան հայ վիմագրության 1967, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 427 էջ:
- Դիվան հայ վիմագրության 1973, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս.Գ. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 526 էջ:

- Եգանյան Օ., Ջեյթունյան Ա., Անթաքյան Փ. (կազմ.) 1965, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1634 սյուն:
- Եգանյան Օ., Ջեյթունյան Ա., Անթաքյան Փ. (կազմ.) 1970, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Բ, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, ՀԳԱ հրատ., 1546 սյուն:
- Զաքարիա Ազուլեցի 1938, Որագրություն, Յերևան, Արմֆանի հրատ., 198 էջ:
- Զաքարիա Քանաքեռցի 2015, Պատմություն. Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխատասիրությամբ Ա. Վիրաբյանի, Երևան, հեղինակային հրատ., 243 էջ:
- Թորամանյան Թ. 2013, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. աշխատությունների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 864 էջ:
- Հակոբյան Թ.Խ. 1969, Երեւանի պատմութիւնը (հնագոյն ժամանակներից մինչեւ 1500 թ.), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 431 էջ:
- Հակոբյան Թ.Խ. 1971, Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 523 էջ:
- Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա. (կազմ.) 1978, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 941 էջ:
- Հակոբյան Վ. (կազմ.) 1984, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1016 էջ:
- Հարությունյան Վ.Մ. 1960, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, «Հայպետհրատ», 146 էջ:
- Հարությունյան Վ. 1997, Երևանի եկեղեցիները (հանրամատչելի տեղեկագիր), Երևան, Այրարատ հրատ., 62 էջ:
- Հարությունյան Ա. 2017, Խոր Վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը, Երևան, «Տիգրան Մեծ», 192+72 էջ ներդիր:
- Հարությունյան Ա. 2019, Ավետիս երեց Երևանցի գրչի ձեռագրական ժառանգությունը, Բանբեր Մատենադարանի, N 27, Երևան, էջ 321-342:
- Հարությունյան Ա. 2020ա, Հին Երևանի և ներկա արվարձանների եկեղեցիներն իբրև գրչության կենտրոններ, Բանբեր Մատենադարանի, N 30, Երևան, էջ 455-479:
- Հարությունյան Ա. 2020բ, Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, Երևան, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, «Ասողիկ», 354 էջ:
- Հարությունյան Ա. 2020գ, Միջնադարյան Երևանը վիմական արձանագրություններում, «ՎԷՄ» համահայկական հանդես, N 3, Երևան, էջ 246-268:
- Հարությունյան Ա. 2021, Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի -Ս. Պողոս-Պետրոս, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ. (հրատարակման ընթացքի մեջ է):

- Հարությունյան Խ.Ա. 2019, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, Երևան, «Մատենադարան», 432 էջ:
- Հարությունյան Խ. 2020ա, Գրիգոր Երևանցի՝ ժէ. դարի երկրորդ կեսի մի արդյունաշատ գրիչ. ա. գրիչը և նրա ձեռագրական ժառանգությունը, Բանբեր Մատենադարանի, N 29, Երևան, էջ 57-80:
- Հարությունյան Խ. 2020բ, Գրիգոր Երևանցի՝ ժէ. դարի երկրորդ կեսի մի արդյունաշատ գրիչ. բ. գրչի հիշատակարանները, Բանբեր Մատենադարանի, N 30, Երևան, էջ 365-386:
- Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ.Մ. 2009, Միջին հայերենի բառարան, երկրորդ բարեփոխված հրատարակություն, Երևան, ԵՊՀ հրատ., 840 էջ:
- Ղաֆադարյան Կ. 1975, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 250 էջ:
- Ճեմճեմեան Կ. Ս. վրդ. 1996, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. Է, Վենետիկ - Ս. Ղազար, 1160 սյուն:
- Մաթևոսյան Ա. 1972, Երևանի գրչության կենտրոնները, Խաչիկյան Ա. (կազմող-հեղինակ), Երևանի հոբելյանը. քաղաքի 2750-ամյակի հոբելյանական տարեգրություն, Երևան, «Հայաստան», էջ 113-118:
- Մալխասեանց Ս. 1944, Հայերեն բացատրական բառարան, Կ. 2 (2-Կ), Երեւան, «ՀՍՍՌ պետհրատ.», 512 էջ:
- Մալխասեանց Ս. 1945, Հայերեն բացատրական բառարան, Կ. Դ (2-Ֆ), կազմեց, Երեւան, «ՀՍՍՌ պետհրատ.», 647 էջ:
- Մայր ցուցակ Մատենադարանի 2012, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատոցի անուան Մատենադարանի, Կ. 2, ձեռագիրք 1801-2100, խմբ. Տէր-Վարդանեան Գ., Երեւան, «Նայիրի», 1880 էջ:
- [Յայսմաւորք] 1730, Գիրք որ կոչի Այսմաւորք, Կ. Պոլիս, «տպ. Գրիգոր դպրի Մարսրանեցւոյ», 722 էջ:
- Շահագիզ Ե.Հ. 1987, Աշտարակի պատմությունը, բնագրի պատրաստումը, առաջաբանը, հավելվածներն ու լրացումները՝ Պ.Հ. Հակոբյանի, Երևան, «Հայաստան», 348 էջ:
- Շահագիզ Ե. 2003, Հին Երևանը, «հրատ. Մելքոնյան ֆոնդի», Յերևան, 1931, Ա. Սարգսյանի և Լ. Ամիրջանյանի ծանոթագրություններով և լուսանկարներով լրամշակված վերահրատ. Մ. արք. Աշոցյան, Երևան, «Մուղնի», 271 էջ+1 ներդիր:
- Շահխաթունեանց Յովհաննէս եպս. 2014, Ստորագութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ Ա. Տէր-Ստեփանեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 559 էջ:
- Սաղումյան Ս. 1998, Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Երևան, «Գիտություն», 346 էջ:
- Սմբատեանց Մ. արքեպս. Նախիջեւանցի 1895, Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց, Վաղարշապատ, «տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի», 844 (+12) էջ:

- Սուքիասեանց տ. Գր. ք. 1909, Մի հետաքրքիր դոկումենտ, «Эриванския обявления», N 15, IX годъ, среда, 18 марта, շարունակությունը՝ N 17, IX годъ, среда, 25 марта.
- Սուքիասեանց Գ. քիյ 1910, Մեր համեստ պատասխանը Երեւանոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ նախկին երեցփոխան պարոն Դ. Պոպովին իւր N 9 հաշուետետրի առթիւ, Երեւան, «տպ. Է. Տէր-Գրիգորեանցի», 16 էջ:
- Օրմանեան Մ. արքեպս. 1979, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 195 էջ:
- Линч Х.Ф.Б. 1910, Армения, путевые очерки и этюды, пер. съ английского Елизаветы Джунковской, т. 1, «Типография М. Мартиросянца», Тифлисъ, N 3, 597 с.
- Сивков А.В. 1962, Об одном сооружении XIII века в Ереване, Պատմա-բանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 183-197:
- Шарден 1902, Путешествіе Шардена по Закавказью въ 1672-1673 гг., пер. Е.В. Бахутовой и Д.П. Косовича, съ пятью рисунками, Тифлисъ, Скоропечатня М. Мартиросянца, 301 с.
- Chardin J. 1811, Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, nouvelle edition par L. Langlès, t. deuxième, Paris, "Le Normant, imprimeur-libraire", 463 p.

ԵՐԵՎԱՆՑԻ ԽՈՋԱ ԳՐԻԳՈՐ ՄՈԾԱԿԵՆՑԸ ԵՎ ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ N 6231 ՀԱՅՍՄԱՎՈՒՐԸ

Խաչիկ Հարությունյան

Ամփոփում

Ուսումնասիրությունը նվիրված է Մոծակենց անունով հայտնի ուշմիջ-նադարյան Երևանի ազդեցիկ ընտանիքներից մեկի ներկայացուցիչ Գրիգոր խոջային և նրա գործունեությանը: Այս առումով արժեքավոր են XVII-XVIII դարերի գրավոր տարբեր աղբյուրների վկայությունները, որոնց մեջ իր արժեքավոր տեղեկություններով առանձնանում է 1652 թ. ընդօրինակված ՄՄ N 6231 Հայսմավուրքի գլխավոր հիշատակարանը: Դրանում թվարկվում են մատյանի գրչությունը հովանավորած Մոծակենց տոհմից Գրիգոր խոջայի մեկենասությամբ իրականացված շինարարական աշխատանքներն ու տարաբնույթ նվիրատվությունները Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցուն: Հիշատակարանի համաձայն՝ Գրիգոր Մոծակենցի նյութական միջոցներով կառուցվել է նույն եկեղեցու ժամատունը և մի կամուրջ Երևանամերձ Փարաքար գյուղում: Սակայն, կարծում ենք, խոջայի կամրջաշինությունն

այսքանով չի սահմանափակվել. ըստ պատմագիր Առաքել Դավրիժեցու՝ Գրիգոր խոջայի հովանավորությամբ է Քասախ գետի վրա կառուցվել Աշտարակի՝ մինչ օրս կանգուն կամուրջը: Հոդվածում հիշատակած՝ Մոծակենց տոհմանունով այլ անձանց մասին մեր տեղեկությունները սուղ են:

Աշխատանքի մյուս հատվածը նվիրված է ՄՄ N 6231 Հայսմավուրքի պատմությանը՝ գրչությունից մինչև Երևանի Մատենադարան հասնելը: Ըստ մատյանում տեղ գտած հետագա մի քանի հիշատակագրությունների՝ մատյանը գերեվարվել է, տարվել Կարին, ապա փրկագնվել և կրկին վերադարձվել է Երևան, իսկ XX դարասկզբին քաղաքի տարբեր եկեղեցիներից հավաքված ձեռագրերի հետ մուտք է գործել Մաշտոցի անվան Մատենադարան:

Բանալի բառեր՝ Երևան, Նորք, գրիչ, հիշատակարան, խոջա, Մոծակենց, Աշտարակ:

ГРИГОР ХОДЖА МОЦАКЕНЦ ИЗ ЕРЕВАНА И АЙСМАВУРК N 6231 ИЗ МАТЕНАДАРАНА ИМ. МЕСРОПА МАШТОЦА

Хачик Арутюнян

Резюме

Исследование посвящено деятельности Григора ходжи, который являлся членом одной из влиятельных семей позднесредневекового Еревана, известной как Моцакенк. В контексте данного исследования важно отметить ценные свидетельства различных письменных источников XVII-XVIII веков, среди которых выделяется основной колофон рукописи ММ 6231, скопированный в 1652 году, с соответствующими сведениями о Григоре. В том же колофоне писец перечисляет строительные работы, финансируемые Григором, который спонсировал также написание рукописи и сделал различные пожертвования церкви Катогики Св. Аствацацин в Ереване. Согласно этому источнику, часовня той же церкви и мост в соседнем селе Паракар были построены при финансовой поддержке Григора Моцакенца. Однако, похоже, строительство мостов этим не ограничилось. По словам историка Аракела Даврижеци, мост в Аштараке, через реку Касах был построен при финансовой поддержке того же Григора.

Вторая часть статьи посвящена истории рукописи ММ 6231. Согласно ряду других колофонов, написанных от руки, книга была украдена и

вывезена в Карин, но впоследствии она была возвращена в Ереван и в начале XX века попала в Матенадаран вместе с рукописями, хранившимися в различных церквях города.

Ключевые слова – Ереван, Норк, писец, колофон, ходжа, Моцакенк, Аштарак.

GRIGOR KHOJA MOTSAKENTC OF YEREVAN AND NO 6231 HAYSMAYURK' OF MATENADARAN OF MESROP MASHTOTS

Khachik Harutyunyan

Abstract

The study is dedicated to the activities of Grigor Khoja, a member of one of the influential families of the late medieval Yerevan known as the Motsakentc. In the context of this research, it is important to highlight the valuable evidences of various written sources of the XVII-XVIII centuries, among which the main colophon of the manuscript MM 6231 copied in 1652, stands out with its relevant information about Grigor. In the same colophon, the scribe lists the construction works funded by Grigor Khoja, who has sponsored also the writing of the manuscript and made various donations to the Kathoghike St. Astvatsatsin Church in Yerevan. According to this source, the chapel of the same church and a bridge in the nearby village of Parakar were built with the financial support of Grigor Motsakentc. However, as it seems, the construction of the bridges was not limited to this. According to historian Arakel Davrijetsi, the Ashtarak bridge on the Kasakh River was built under the sponsorship of the same Grigor Khoja.

The second part of the article is dedicated to the history of the manuscript MM 6231, from its copying to later reaching the Matenadaran in Yerevan. According to several further colophons written in the manuscript, the book has been captured and taken to Karin, but later was liberated, returned to Yerevan, and at the beginning of the XX century entered the Matenadaran with the manuscripts collected from various churches in the city.

Key words – Yerevan, Nork, scribe, colophon, Khoja, Motsakenk, Ashtarak.